ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «29-ը» մայիսի 2018թ.
ժամը 11^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ն. Արշակյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 23.05.2018թ. N 343/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյանի փոխարեն որպես հանձնաժողովի նախագահ է սահմանվել ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյանը

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «Սաֆարդայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (Հավելված N 6) և առաջին տեղը զբաղեցրած

մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N 6.1) չեն համապատասխանում ընթացակարգի իրավերի 7.19 կետով սահմանված պահանջներին. դրանք հաստատված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ **«Բեսթ Գրուպ», «Ռաֆ-Օջախ» և «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ**-ների, որոնք, ըստ ներկայացված տվյալների, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց հարկային պարտավորություններ: Քանի որ «Ռաֆ-Օջախ» և «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ների հարկային պարտավորությունների չափը գերազանցում է 50,000 ՀՀ դրամը, հանձնաժողովը որոշեց վերջիններիս հայտերը մերժել ամբողջությամբ և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Ռաֆ-Օջախ» և «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ների տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցները կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ: Քանի որ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը, հանձնաժողովը որոշեց վերջինիս հայտը գնահատել բավարար միայն **10-րդ** չափաբաժնի մասով, որտեղ հարկային պարտավորության չափը չի գերազանցում առաջարկված գնի մեկ տոկոսը, իսկ մնացած չափաբաժինների մասով որոշեց «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ վերջինիս տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

1.3 Հաշվի առնելով «Բեսթ Գրուպ», «Ռաֆ-Օջախ» և «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ների մերժման փաստը՝ որոշեց մերժված չափաբաժինների մասով 1-ին տեղ ճանաչել հաջորդող տեղ զբաղեցնող մասնակիցներին, մասնավորապես.

- **15-րդ, 42-րդ, 52-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, 74-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց **«Էքսպրես Շին» ՍՊԸ**-ն,
- **72-րդ և 73-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց **«Նարնիկ» ՍՊԸ**-ն,
- **77-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց **«Ֆոտոն» ՍՊԸ**-ն,
- **78-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց **Ա/Ձ Գրիգոր Այվազյանը**:

Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **իրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

1.4 Քանի որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի մերժման արդյունքում 34-րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով **01.06.2018թ. ժամը 15:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը կասեցնել մինչև բանակցությունների օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ հունիսի 1-ին, ժամը 15^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ն. Արշակյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

29.05.18թ.